# Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
# անշարժ գույքի շուկան 2007թ. 9-ը ամսում

*Հոդվածը ներկայացնում է ԼՂՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացված, անշարժ գույքի շուկայի մոնիտորինգի /համակարգված դիտարկումներ / աշխատանքների արդյունքները և նպատակ ունի քաղաքացիներին իրազեկ դարձնելու ԼՂՀ անշարժ գույքի շուկայի իրավիճակը: Հոդվածում ներկայացվող Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում անշարժ գույքի շուկայական գները ձևավորվել են կոմիտեի ստորաբաժանումների կողմից գրանցված առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիէլթորական գործակալություններում առաջարկվող անշարժ գույքի գների վերլուծության արդյունքում:*

2007թ. 9-ը ամսում կոմիտեի ստորաբաժանումների կողմից իրականացվել են 4462 իրավունքների պետական գրանցումներ , որոնց քանակը 2006թ. 9-ը ամսվա համեմատ աճել է՝ 19,9 %-ով:

Ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, իրականացված գրանցումների ծավալները ունենն հետևյալ բաշխվածությունը.



2006-2007թթ. 9-ը ամսում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | 2006թ 9-ը ամիս | փոփոխումը 2006թ. 9-ը ամսի նկատմամբ | 2007թ. 9-ը ամիս |
|---|---|---|---|
| Ստեփանակերտ | 1474 | 65,5% | 2440 |
| Ասկերան | 576 | -20,8% | 456 |
| Մարտունի | 460 | 5,2% | 484 |
| Մարտակերտ | 692 | -59,8% | 278 |
| Հադրութ | 146 | 0,0% | 146 |
| Շուշի | 219 | 2,2 անգամ | 487 |
| Քաշաթաղ | 154 | 11,0% | 171 |
| **Հանրապետությ** | **3721** | **19,9%** | **4462** |

Նույն ժամանակահատվածում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների գրանցումները, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006-2007թթ. 9-ը ամսում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն ըստ գործարքների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| *Գործարքների տեսակները* | *2006թ 9-ը ամիս* | *փոփոխումը 2006թ. 9-ը ամսի նկատմամբ* | *2007թ. 9-ը ամիս* |
|---|---|---|---|
| *Առուվաճառք* | *544* | *78,7%* | *972* |
| *Նվիրատվություն* | *728* | *-57,3%* | *311* |
| *Վարձակալում* | *820* | *-49,8%* | *412* |
| *Գրավադրում* | *354* | *70,1%* | *602* |
| *Ժառանգություն* | *291* | *-3,8%* | *280* |
| *Օգտագործում* | *10* | *3,1 անգամ* | *31* |
| *Սեփականաշնորհում* | *397* | *30,7%* | *519* |
| *Մասնավորեցում* | *188* | *23,4%* | *232* |
| *Առաջնային գրանցում* | *389* | *2,8 անգամ* | *1103* |
| ***Ընդամենը գործարք*** | ***3721*** | ***19,9%*** | ***4462*** |

2007թ. 9-ը ամսում հանրապետությունում ընդհանուր առմամբ իրականացվել են 972 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է՝ 78,7%-ով, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել են 227, իսկ բնակելի տների նկատմամբ՝ 194 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ:

| *N N* | *Անշարժ գույքի տեսակները* | *Առուվաճառքի գործարքների քանակները* | | |
|---|---|---|---|---|
| | | *2006թ 9-ը ամիս* | *փոփոխումը* | *2007թ. 9-ը ամիս* |
| 1 | ***բազմաբնակարան շենքի բնակարան*** | *180* | *26,1%* | *227* |
| 2 | ***առանձնատուն*** | *153* | *26,8%* | *194* |
| 3 | ***արտադրական նշ. օբյեկտ*** | *24* | *2,2 անգամ* | *53* |
| 4 | ***հասարակական նշ. օբյեկտ*** | *81* | *77,8%* | *144* |
| 5 | ***ավտոտնակ*** | *6* | *3,3 անգամ* | *20* |
| 6 | ***հող*** | *100* | *3,3 անգամ* | *334* |
| | *Ընդամենն անշարժ գույք* | ***544*** | ***78,7%*** | ***972*** |

2006-2007թթ. 9-ը ամսում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և բնակելի տների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների և կոմիտեի կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի դիտարկումների արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական նվազագույն, առավելագույն և միջին գները ու նրանց փոփոխումները

### Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների

| Քաղաքներ | 2006թ. 9-ը ամիս<br>1 քմ արժեքը /$/ | | | 2007թ. 9-ը ամիս<br>1 քմ արժեքը /$/ | | | փոփոխումը 2006թ. 9-ը ամսվա նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | նվազագույն | առավելագույն | միջին | նվազագույն | առավելագույն | միջին | |
| Ստեփանակերտ | 145.0 | 350.0 | **247,5** | 352.0 | 520.0 | **436,0** | *76,2%* |
| Ասկերան | 60.0 | 92.0 | **76,0** | 92.0 | 140 | **116,0** | *52,6%* |
| Մարտունի | 63.0 | 96.0 | **79,5** | 98.0 | 141 | **119,5** | *50,3%* |
| Մարտակերտ | 27.5 | 56.0 | **41,75** | 42.0 | 74 | **58,0** | *38,9%* |
| Հադրութ | 33.5 | 69.0 | **51,25** | 55.0 | 90 | **72,5** | *41,5%* |
| Շուշի | 38.0 | 67.0 | **52,5** | 65.0 | 106 | **85,5** | *62,9%* |

### Բնակելի տներ

| Քաղաքներ | 2006թ. 9-ը ամիս<br>միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/ | | | 2007թ. 9-ը ամիս<br>միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /$/ | | | փոփոխումը 2006թ. 9-ը ամսվա նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | նվազագույն | առավելագույն | | նվազագույն | առավելագույն | միջինը | |
| Ստեփանակերտ | 14500.0 | 49000.0 | **31750,0** | 40500.0 | 69000.0 | **54750,0** | *72,4%* |
| Ասկերան | 4700.0 | 8100.0 | **6400,0** | 8200.0 | 11000.0 | **9600,0** | *50,0%* |
| Մարտունի | 4750.0 | 7400.0 | **6075,0** | 7400.0 | 10400.0 | **8900,0** | *46,5%* |
| Մարտակերտ | 3150.0 | 5200.0 | **4175,0** | 4700.0 | 6700.0 | **5700,0** | *36,5%* |
| Հադրութ | 3350.0 | 5700.0 | **4525,0** | 5100.0 | 7400.0 | **6250,0** | *38,1%* |
| Շուշի | 3200.0 | 5600.0 | **4400,0** | 5100.0 | 7800.0 | **6450,0** | *46,6%* |

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը հիմք է հանդիսանում պնդելու, որ 2006-2007թ. 9-ը ամիսների ընթացքում անշարժ գույքի գների դինամիկան աճման միտում ունի :

2007թ-ի 9-ը ամսում հանրապետությունում իրականացվել են 412 վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է՝ 49,8%-ով:

Վարձակալության գործարքների քանակների փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2006-2007թ. 9-ը ամսում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | 2006թ 9-ը ամիս | փոփոխումը | 2007թ. 9-ը ամիս |
|---|---|---|---|
| Ստեփանակերտ | 36 | 2,2 անգամ | 78 |
| Ասկերան | 347 | -66,3% | 117 |
| Մարտունի | 211 | -56,4% | 92 |
| Մարտակերտ | 83 | -57,8% | 35 |
| Հադրութ | 59 | -44,1% | 33 |
| Շուշի | 13 | -30,8% | 9 |
| Քաշաթաղ | 71 | -32,4% | 48 |
| **Հանրապետություն** | **820** | **-49,8%** | **412** |

2007թ-ի 9-ը ամսում հանրապետությունում գրանցվել են, 1542,72 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության 267 գործարքներ, որոնց քանակները և մակերեսները ըստ հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | 2007թ-ի 9-ը ամսում վարձակալված հողերը | |
|---|---|---|
| | քանակը | մակերեսը /հա/ |
| Ասկերան | 112 | 402,11 |
| Մարտունի | 79 | 388,9 |
| Մարտակերտ | 26 | 228,0 |
| Հադրութ | 15 | 63,9 |
| Շուշի | 4 | 35,0 |
| Շահումյա ն | 1 | 20,0 |
| Քաշաթաղ | 30 | 404,81 |
| **Հանրապետություն** | **267** | **1542,72** |

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի դիտարկումները ցույց են տալիս, որ հանրապետության քաղաքներում վարձակալության համար, որպես ակտիվ անշարժ գույքի տեսակներ, հանդես են գալիս Ստեփանակերտում ՝ հասարակական նշանակության օբյեկտները, իսկ շրջաններում՝ գյուղատնտեսական նշանակության հողերը.

2007թ-ի 9-ը ամսում հանրապետությունում իրականացվել են 602 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է՝ 70,1 %-ով:

2006-2007թ. 9-ը ամսում գրավադրման գործարքների քանակների փոփոխություններն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *2006թ 9-ը ամիս* | *դխումը 2006թ. 9-ը ամսի նկատմամբ* | *2007թ. 9-ը ամիս* |
|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *243* | *85,6%* | *451* |
| Ասկերան | *34* | *41,2%* | *48* |
| Մարտունի | *52* | *19,2%* | *62* |
| Մարտակերտ | *7* | *42,9%* | *10* |
| Հադրութ | *9* | *33,3%* | *12* |
| Շուշի | *8* | *2,1 անգամ* | *17* |
| Քաշաթաղ | *1* | *2,0 անգամ* | *2* |
| ***Հանրապետություն*** | ***354*** | ***70,1%*** | ***602*** |

2006-2007թ. 9-ը ամիսներում արձանագրված գրավադրման գործարքների քանակի աճը պայմանավորված է նաև հանրապետությունում հիպոթեքային շուկայի ձևավորման գործոնով և ըստ մեր դիտարկումների հանրապետության ներդրումային մթնոլորտը նախապայմաններ է ստեղծում հիպոթեքային շուկայի հետագա զարգացման համար:

2007թ-ի 9-ը ամսում հանրապետությունում իրականացվել են 751 սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ, որոնց քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է՝ 28,4%-ով:

Սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքների քանակների փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2006-2007թ. 9-ը ամսում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *9-ը ամիս 2006թ* | *փոփոխումը 2006թ. 9-ը ամսի նկատմամբ* | *9-ը ամիս 2007թ* |
|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *348* | 32,5% | *461* |
| Ասկերան | *28* | -53,6% | *13* |
| Մարտունի | *53* | -39,6% | *32* |
| Մարտակերտ | *29* | 2,5 *անգամ* | *71* |
| Հադրութ | *37* | -59,5% | *15* |
| Շուշի | *83* | 65,1% | *137* |
| Քաշաթաղ | *7* | 3,1 *անգամ* | *22* |
| ***Հանրապետություն*** | ***585*** | ***28,4%*** | ***751*** |

## ԼՂՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«Գնահատման և համակարգված դիտարկումների բաժին»
ՀԵՌ : 5-17- 49